Առաջարկեք ուսանողներից մեկին կարդալ Ղուկաս 18.18–23 հատվածները՝ փնտրելով, թե Բրիգամ Յանգի արձագանքը ծառայելու հրավերներին ինչպես է տարբերվում այն մարդու արձագանքից, որը հաղորդակցվեց է Փրկչի հետ այս պատմության մեջ:

- Ի՞նչ գիտեք Տիրոջ մասին, որը կարող է օգնել մեզ պատրաստակամ լինել զոհաբերություններ անել, ինչպես Բրիգամ Յանգն արեց:
- Բացի միսիաներ ծառայելուց, ի՞նչ այլ եղանակներով Տերը կարող է ցանկանալ, որ մենք զոհաբերություն անենք՝ Իրեն ծառայելու համար:

Կիսվեք, թե ինչ մտքեր ունեք Տիրոջը ծառայելու համար զոհաբերության պատրաստ լինելու մասին:

Քննարկում 3

ԲՐԻԳԱՄԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Սկսեք՝ տալով նմանատիպ հարց.

- Ի՞նչ պատճառներով է միսիոներին անհրաժեշտ Տիրոջ օգնությունը:

Կարդացեք կամ ամփոփ ներկայացրեք հետևյալը.

Կրկին ամուսնանալուց և հինգ այլ միսիաներում ծառայելուց հետո Բրիգամը այլ առաքյալների հետ կանչվեց միսիա ծառայելու Անգլիայում:

Բրիգամը նկարագրել է իր միսիան.

Մենք եկանք օտար մի երկիր՝ որպես օտարականներ, առանց փողի, բայց Աստծո ողորմությամբ: Եվ մենք ձեռք բերեցինք շատ ընկերներ, Եկեղեցիներ հիմնեցինք Մեծ Բրիտանիայի թագավորության գրեթե բոլոր նշանավոր քաղաքներում, մկրտվեցինք յոթից ութ հազար մարդ, տպագրեցինք Մորմոնի Գրքի 5000 օրինակ . . . և հազարավոր մարդկանց սրտերում ցանեցինք հավերժական ճշմարտության սերմերը, . . . այս բոլոր բաներում ես ճանաչում եմ Աստծո ձեռքը: (*Teachings of Presidents of the Church: Brigham Young* [1997], 6)

Առաջարկեք որևէ ուսանողի կարդալ Ամմոնի խոսքերը Ալմա 26.12–13 հատվածներում: Ապա հարցրեք.

- Ինչպե՞ս են Բրիգամ Յանգի խոսքերը համեմատվում Ամմոնի խոսքերի հետ:
- Ձեր կարծիքով, Տիրոջն ապավինելն ինչո՞ւ է կարևոր, երբ ձգտում եք ծառայել Նրան:
- Ինչպե՞ս եք փորձել ապավինել Տիրոջը՝ Նրան ծառայելիս:

Կիսվեք Տիրոջն ապավինելու վերաբերյալ ձեր մտքերով կամ զգացմունքներով՝ Նրան ծառայելիս:

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_441-1